# ԱՅԼ ԵՒ ԱՅԼԿ

## Ի ՄԱՀ
### ՊՕՂՈՍԻ ՄԻՍՔԱՃԵԱՆ

« Քո «Հրաչք մղձաւանջ»դ, որոց մի
« քանի թերթերն կարդացիր ինձ՝ կ'ան-
« դրադառնամ այժմ։

« Նորեկ մ'եմ հոս. այլ ինչպէս ըսի,
« կը բաղձամ մերթ ընդ մերթ գալ յի-
« շողութեանդ, երևակայութեանդ մէջ։

« Նորեկ մ'եմ հոս, այս անհուն աշ-
« խարհին մէջ պիտի գտնեմ քո սրտի հա-
« տորներն. դու չի յանձնարարեցիր ինձ
« թէպէտ, այլ դու չ'ըսած՝ ես քեզ հա-
« մար պիտի ողջունեմ զանոնք։

« Այժմ, խաղաղ գիշերիդ մէջ դիտէ՛
« երկինքն աստեղազարդ. գիտես թէ ա-
« նոնք ալ անհամար աշխարհներ են՝ ո-
« րոնք ևս կը թաւալին, կը շարժին ան-
« հունութեան մէջ. դիտէ՛ երկինքն. թող
« առ այժմ այս հողին գաղտնիքն. դու
« իսկ հող և գաղտնիք մ'ես և ինքզինքդ
« չես կարող ճանչնալ։

« Եւ ըսեմ քեզ. ոչ ոք կարող է մա-
« հուան գաղտնիքն գիտնալ. սակայն հա-
« ւատքն միայն ջահ մ'է մտքին մռայլն
« փարատող։

« Ես հաւատացի Աստուծոյ և հաւատ-
« քով փակեցի աչքերս։

*

« Մահն, թերևս հաճելի ցոյց տուի
« քեզ. սակայն... մեռնելու համար՝ հա-
« ւատք մ'ունենալու է. և նոյն իսկ այս
« ալ քիչ է՝ մինչև հնչէ վերջին վայր-
« կեանն, մինչև փչէ մարդ իւր հոգին...
« Որչափ ալ հաւատացեալ, որչափ ալ
« անխուսափելիին առջև պատրաստ ե-
« ղած ըլլայ նա՝ յետին ժամուն... դժըն-
« ղակ է։

« Թող կրոնքն երգէ « Փառք ի բար-
« ձունս ». սոսկալի է և սակայն մահն։
« Աստուածորդւոյն վրայ անգամ մայրն
« լացաւ։ Ամենէ դժբախտն, ծերն, չար-
« չարուողն, ամենէ մոլի հաւատացեալն
« իսկ — ինչ կրօնքէ ալ ըլլայ — կը սոս-
« կայ անկից։ Ինչ ահաւոր ճգնաժամ։

« Մի միայն յուսատու կրօնքն մխիթա-
« րութիւն մը պիտի ըլլայ կենդանիին՝ որ
« հաւատք ներշնչելով անոր՝ պիտի պա-
« տրաստէ զայն մահուան։

« Մարդ պէտք է հաւատայ. և երա-
« նելի է նա որ հաւատայ։

« Իմ վրայ ցաւելն՝ ալ բնաւ օգուտ
« մը չ'ըներ, բարեկամ. « այլ մահա-
« մերձն ալ խնդրէ երկու բան. նախ
« կեանքը՝ վերջը լացող մ'իր վրան»։

« Կարծես, այո՛, կարծես թէ պիտի մը-
« խիթարուիմ գիս յիշելովդ, ես որ անմը-
« խիթար անցայ աշխարհէն՝ քնարս ան-
« գամ ջաղջախուեցաւ, խորտակուեցաւ
« ձեռացս մէջ՝ սրտիս ազեկէզ մրմունջն
« առանց կարենալ իսկ ձայնելու... և
« սրտաբեկ հեռացայ։

*

« Եւ արդ. պիտի յառնեմ և ես գե-
« ղեցմանէն. այլակերպեալ՝ ցնորք մը,
« բանդագուշանք մը եղած... պիտի յառ-
« նեմ, ծպտեալ՝ ուրուական մը եղած։

« Մարմինս յաճուն քրքրուի. սակայն
« շրջմոլիկ հրոյ վերածեալ՝ պիտի ծփամ
« զցայգ և զցերեկ, մերթ փոսփոր՝ հո-
« ղուն վրայ, երբեմն գոլորշի՝ շամանդա-
« ղին հետ, մերթ փոսուռայ՝ երբեմ շող՝
« օդին մէջ...

« Երբ աշխարհ մթութեան մէջ կը գի-
« շերէ՝ ալ յանդուգն ու սանձարձակ դա-
« տարկասուն մը դարձած ես՝ ոգիներու-
« փարելով՝ մինչև զառանցանք՝ պիտի
« կաքաւեմ ու պարեմ... յակնիոս ու
« արբշիռ՝ փոթորիկն գրկած՝ մինչև մա-
« լեգին ուշաթափ՝ հողմավար պիտի թռիմ,
« պիտի ճախրեմ...

« Եւ միայն գուցէ այսպէս կարենամ
« յափրանալ, յագենալ, յղփանալ՝ փո-
« խան իմ ունեցած անսուաղ կեանքին՝
« այժմ անյագ շուայտ՝ աղջամղջին թախ-
« ծութենէն հրճուանք ծծելով, մրրկայոյզ
« այերց՝ ծիծաղ շնչելով...»։

digitised by A.R.A.R.@

*

Եւ կը սուրայ հողմի սաստկաշունչ։

Միթէ մահուան մէջէն իսկ երազել, Աստուած իմ գոգցես անրջից կ'արթննայ, կարծես գիշերաշրջիկ մ'է որ կ'սթափի՝ այնչափ յուզեալ է։

Կ'սթափի տագնապներու մէջ՝ կարծես իւր իսկ բանտագուշանքն լսելով։

Պահ մը կը մնայ մոլորուն ակնարկներով։

Եւ զգալով անօգուտ ըլլալն սին ու նանիր բարբառին, խոստակցութենէն խուսրելու կամ կասելու պէս՝ ձեռքի շարժման ձև մը կ'ընէ…։

Ցետոյ, մատն շրթանցն տարած՝ յետս յետս կ'ընկրկի։

Կը քաշուի, կը հեռանայ. պատկերն նուաղ առ նուաղ կը նրհարանայ և մանրանկար մը կը մնայ՝ հոն, խորն, հեռի, և այն ալ կամաց կամաց կ'անհետի վարագոյրին ետև…

Ռ. Ց. Փ.

Տարայարելի

---

# ՓԻԼԻՍՈՓԱՅ ԿՈՃՂ

Ժամանակով մի կոճղ կար հաստ ու հին,
Որ տերվիշի պէս կը ճգնէր ի սարին.
Նորա գլխուն համբերատար,
Բոլորուել էր ամբողջ մի դար։
Նա կը խոկար գիշեր – ցորեկ,
Քննէր, զննէր, առտու – երեկ,
Եւ բնութեան խոր գաղտնեաց տակ,
Իւր գոյութեան կ'ուզէր պարզել նպատակ։
Բայց նա երբեր չէր գտներ մի որոշ փաստ,
Կեանքը նմա թուէր անմիտ, անիմաստ։
Մի օր, մի ժիր ճպուռն մ'ուրախ,
Ճռճռալով եւր խաղն ու տաղ,
Ցատկեց խիկար կոճղին կռնակ
Ուր կը ճխար չարունակ։
Կոճղը կանչեց, ա՜յ խենդ միջատ՝ խելագար,
Կ'արժէ՞ միթէ, մէկ – երկ օրուան կեանքիդ համար.

– Այդքան զուարթ, ճչապատառ,
Երգով, տաղով, լեցնել սար և անտառ։
Ահա կը հասնին ձմրան ցուրտ օրեր,
Եւ դու մէկ չնչով կը սառչիս անտէր։
Ես, որ միշտ կ'ապրիմ կեանքով դարեոր,
Դեռ երբէք կուշտ–կուշտ չեմ չէնցած մի օր։
— Ի՞նչ հոգ, ասաց ճպուռն անկախ,
Այս օր ողջ եմ, կ'ապրիմ ուրախ,
Վաղուան մահէն ես չեմ վախնար,
Զի մի չէն օրն ամբողջ կեանք մ'է ինձ համար։
Իսկ քո կեանքը թէպէտ երկար, բայց միշտ լուռ,
Հազար անգամ մահէն դառն է և տըխուր –
Ասաց գնաց երգով, տաղով,
Ճռճռալով, պարով, խաղով։
Իսկ կոճղը խոր փիլիսոփայ,
Կը խոկայ դեռ մինչև հիմայ։

ԱՌԱՔԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

15 Մարտ 1908

---

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ


Գոտուրեան Հ. Մ. — Հայ Մամուլը տասնևհինգ տարուան մէջ (1894–1910) — Բազմավէպ . 385
*** — Հայոց Պատմութիւնը Օգոստոսի, Տիբերի և Ներոնի ժամանակ, ըստ Տակիտոսի . . 389
Ալոճեան Ց. — Արհապաշտութիւն և կրակապաշտութիւն . . . . . . . 393
Հ. Ղեւոնդ Ալիշան. — Օրագիր առժամայն ազգմանց մտաց և սրտի (1842) . . . . 399
Գոտուրեան Հ. Մ. — Քուչակեան քերթուած մը 400


## ԳՐԱԿԱՆՔ


Հ. Արսէն Ղազիկեան. — Ընչաս դժոխք կ'իջնէ «Վիրգիլիոսի Ենէական»էն թարգմ. . . . 401
Սուրէն Պարթևեան. — Անոնց մահերը (Ամերիկահայ Տարագիրներուն) Բոքմավէպ . . . 405
Բէկ-Ցովս. Աստուածատուր. — Եզբօր սեղ. – Վէպ Ե. Պ. Միխայլովսկի. . . . 408
Անդրիկեան Հ. Ներսէս. — Անանջէ (Վէպ) . 411
Դ. Վարուժան. — Վերածնութիւն (բանաստեղծութիւն) . . . . . . . 418
Ալատին. — Ցաղթանակը (բանաստեղծ.) . 419
Գոտուրեան Հ. Մ. — Ծովային ճամբուս սեր 423
Ա. Նալբանդեան. — Փիլիսոփայ կոճղ (Առակ) . . . . . . . . 432


## ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ


Հ. Ղ. Տայեան. — Բարիզ աքսորուած Հայ բանաստեղծ մը Ա. Չօպանեան. Հեծեծողը . . 420
Կարծիքներ Ա. Չօպանեանի «Քերթուածներ»ու մասին–նամակներ . . . . . . . 421
Գոտուրեան Հ. Մ. — Տաճկահայ Մամուլ (Սահմանադրական շրջանի Հայ Հանդէսները) . 452


## ԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ


Տ. Հ. Ն. — Շրջանաւոր ճանապարհորդութիւն կենդանեաց մէջ . . . . . . . 425


## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ


Ի Մահ Պօղոսի Միսաքեան. – Խոհք . . 431
Իմաստներ . . . . . 388, 419, 420

Ցաւելուած. X. — Հանգիստ Գեր. Ներսէս Եպ. Ճնտոյեանի։
Հ. Կ. Տէր Սահակ. — Տարօնի Հայրապետին (քերթուած)։
Ազգային Քրոնիկ (կողքին վրայ)


digitised by A.R.A.R.@